




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1721

171

0-73

1925

ՄԱՏԵՆԱՇԱՐ “ՀԱՅԱՍՏԱՆ”

Թիւ 10

ՄԻՐԵԼՈՒ ԵՒ ՄԻՐՈՒԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

Հեղ. ՕՂԱՏԻՈՍ

Թարգմ. Խաղերէնի

Հրատարակիչ՝ Լ. Ն. ՍԷՄԵՐՃԵԱՆ

ԳԻՆ 25 ՍԷՆԹ



Փ. Ս. Ր. Բ. Զ.

Տպարան Լ. Ն. ՆԵՐՍԻՍ 65, Rue Pascal

1925

171
O-73

“ՄԱՏԵՆԱՇԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ”

Թիւ 10

ՄԻՐԵԼՈՒ ԵՒ ՄԻՐՈՒԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

Հեղ. ՕՎԼԱՏԻՈՍ

Թարգմ. Խաղերէնի


Հրատարակիչ՝ Լ. Ն. ՍԷՄԵՐՃԵԱՆ



ՓՈՒՐՏ

Տպարան Կ. Ս. ՆԵՐՍԻՍ 65, Rue Pascal


1925



27394-Ա.2



ՄԱՆՁԵՐՈՒՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ



Ա.

Կնոջ ընտրութիւնը



Երբ պարագաները թոյլատու են, և երբ կրնաս գործել ազատ ամէն կապէ, ընտրէ այն կինը որուն պիտի ըսես, «Քեզ միայն կրցայ սիրել» Ասիկա քեզի պիտի չիյնայ երկինքէն, զեփիւռին թեւերուն վրայ,— քու աչքերդ են որ պէտք են փնտռել քեզի յարմարելիք կինը:

Դո՛ւն, որ քիչ շատ տեւական սէր մը կը փնտռես, սորվէ՛ նախ այն տեղերը ուր կիները կը յաճախեն: Չեմ ըսեր արդէն որ այս փնտռութիւնը ելլողը առագաստ բանայ, կամ հեռաւոր ճամբորդութիւններու ձեռնարկէ:

Եթէ պէտք կայ, քեզ հրապուրելու համար, երիտասարդութեան ծաղիկի մը, դեռատի աղջիկներ պիտի ներկայանան աչքերուդ: Եթէ աւելի հասուն գեղեցկութեան մը փափաքող ես, այդ տեսակ հազար հատ կիներ համակրութեանդ պիտի արժանանան և դուն



2001

6301-57

ընտրանքի շփոթութիւնը պիտի ունենաս: Եթէ ընդհանրապէս, աւելի լեցուն և աւելի խելոք տարիքէ միայն ախորժ կ'զգաս, այս դեռատի կիներէն, հաւատա՛ ինծի, պիտի գտնես նոյնպէս մեծ թիւով:

Փնտռէ՛ մանաւանդ թատրոնի և պարահանդէսներու մէջ: Իդէներուդ ամէնէն յարմար վայրերն են: Գուն հոն պիտի գտնես այն կիները զոր կը սիրեն՝ այն զոր կը խաբեն, այն զոր միայն մէկ անգամ կ'առնեն, այն որուն կ'ուզեն կապուիլ: Անոնք հոգ կուգան զիտելու համար: Ասո՛ք այն տեղերն են ուր անմեղ գեղեցկութիւնը ամէնէն աւելի ենթակայ է վտանգներու:

Մի մոռնար կրկէսը ուր քաջարի երիվարներ յաղթանակի համար կը մրցին: Իր շրջապատին անհունութիւնը նպաստաւոր է սիրահարներուն: Բնաւ հարկ չկայ հոն, մատերու լեզուին՝ գաղանիքներդ արտայայտելու համար, կամ գլխու նշանի մը՝ ըսելու համար թէ հասկցած են: Նստէ՛ սիրուհիդ կարելի եղածին չափ մօտը, ուշադիր եղիր որ գործ աւրող մը ձեզ չի բաժնէ: Տեղաւորուէ ճիշդ անոր քովիկր: Այն ատեր գործը կը մնայ միայն խօսք բանալու մէջ և խօսելու համար, օգտուէ ամբոխին աղմուկէն: Հարցուր հետաքրքրութեամբ, մանող ձիերուն և կամ պարող զոյգերուն անունները, և առանց ուշացումի, գովէ այն, զոր ան կը գովէ, որն որ ըլլայ: Եթէ պատահի որ փոշի մը իյնայ սիրուհիդ վրին, վանէ՛ զայն մատովդ: Եթէ այդպէսով չիյնայ, կրկին վանէ զայն: Ա՛յն ինչ պէտք է քու փութկոտ հոգածութեանդ իբր

պատրուակ ծառայէ: Եթէ իր փէշը քիչ մը շատկէկ գետին քսուի, վերցո՛ւր զայն նախանձոտ ձեռքով մը, որպէս զի բան մը չաղտոտէ զայն, — արդէն, իբր վարձատրութիւն քու հոգատարութեանդ, սիրուհիդ թոյլ պիտի տայ որ իր սրունքները նշմարես:

Ո՛վ որ ալ ըլլայ ձեր ետին գտնուող անձը, ուշագրութիւն ըրէ որ ծունկովը չճնշէ անոր քնքոյշ մարմինը: Ոչինչ մը կը հրապուրէ այս թեթեւ գլուխները: Շատեր բաղդաւոր եղած են, ճարտար ձեռքով մը շտկած ըլլալուն համար նստելու յատուկ բարձերը, հովահարով մը օղը շարժած ըլլալուն, նազելի օտքի մը տակ աթոռակ մը գրած ըլլալուն համար:

Խնձոյքի սեղաններն ալ առիթներ կը հայթայթեն, և հոն գինիէն զատ, ուրիշ բան մ'ալ կ'ստացուի: Գինին զգայարանները կը տրամադրէ և տարփական հրալքներու դիւրամառչելի կը դարձնէ, — զգուշութիւնները, մէկ կողմ կը նետուին, հալածուած երկար զինարբուքէ: Այն ատեն, խնդուքները ծայր կուտան, չքաւորը առատութեան եղջիւրին ձեռք կ'երկարէ: Վիշտերը և հոգերն ալ խորշոմներ չեն կազմեր ճակատներուն վրայ. անկեղծութիւնը, այսօր այնքան հազուադիւր, լեզուները կը քակէ և կեղծիքը կը վանէ: Այնտեղ է որ մանկամարդ աղջիկները յաճախ գրաւեցին երիտասարդ սիրտերը: որովհետեւ Աստղիկը գինիին մէջ, կրակը կրակին մէջ ըսել է: Այսպիսի պարագաներուն, շատ մի՛ վստահիր աղօտ ջահի մը, — գիշերը և գինին գեղեցկութեան մասին մեր դատումը սխալի կը մատնեն:

Բ,

Հրապարակ

Համոզուէ նախ թէ ամէն կին կրնայ գլխէ հանուիլ, և դուն գլխէ պիտի հանես: Միայն ցանցերդ լարէ: Աւելի դիւրին է որ թուշուները գարնան և ձգուները ամռան լուռ մնան, աւելի դիւրին է որ Մէնայի շուները նապաստակին կոնակ դարձնեն, քան թէ կին մը գիմանայ երիտասարդի մը հեշտագրգիւ հրաւերին: Այն կինն իսկ, որ կրնայ լուրջ կարծուիլ, հաւանութիւն պիտի յայտնէ մտովին: Գաղտագողի սէրը հաճելի է կիներուն ինչպէս մանչերուն: Էրեկմարդը իր զգացումը լաւ չկրնար ծածկել, կինը աւելի սքողուն տենչանքներ ունի: Մարդերուն աւելի յարմար պիտի ըլլար շատ չբացուիլ, և տեղի տուած կիները աղաչողի գերը պիտի կատարէին:

Շնորհն կամ մերժեն, կիները կ'ուզեն որ իրենց պաղատինք: Եթէ մերժուէիր, այդ մերժումը քեզի համար վտանգ մը չունի: Բայց ինչո՞ւ համար պիտի մերժուիս, երբ ամէն նոր հաճոյք սիրելի է և երբ ուրիշին ինչքը մերինէն աւելի կը հրապուրէ մեզ: Գրացիին հունձքը մեզի միշտ ամէնէն կայտառները կը կարծուին:

Եւ է՞ն առաջ, ջանացիր յարաբերութիւն մշակել դարպասելիք կնոջ սպասուհիին հետ, — ասիկա քեզի պիտի դիւրացնէ արշաւը: Հասկցիր թէ ան իր տիրուհիին կատարեալ վստահութիւնը կը վայելէ, և թէ անոր

յանցաւոր իղձերուն գաղտնապահ բաժնեկիցն է: Այս կինն է որ դուն պէտք ես շահիլ աղաչանքներով և խոստումներով: Եթէ այդ բանին հաւանի, փնտռածդ դիւրութեամբ պիտի գտնես: Թող ան ընտրէ այն վարկեանը ուր պիտի կրնայ յարմարօրէն ազդել գեղուհիիդ մտքին վրայ: Այս վայրկեանը, անոր շուրջ ամէն բան ուրախ եղած ատենը պիտի ըլլայ: Երբ սիրտը զուարթ է, երբ ո՛չ մէկ վիշտ գայն կը ձնչէ, ան կը բացուի և սէրը մեղմօրէն կը սպրդի հոն:

« Բայց, կը հարցնես ինձի, լաւ չէ՞ սպասուհին իսկ հրապուրել: այն կերպ գործելը շատ բաղդաւոր է: » Մին քեզ պիտի օգնէ յաղթելու, միւսը գործդ պիտի աւելի Մէկը սիրուհիին շնորհները քեզի պիտի դիւրացընէ, ուրիշ մը ամէնը իրեն պիտի վերապահէ: Այս բանը պարագաներէն կախում ունի: Որքան ալ սպասուհին քու գործիդ կը նպաստէ, իմ կարծիքովս աւելի լաւ է որ ետ կենաս անոր դարպասելէ: Այսու հանդերձ, եթէ այս վերջինը, երբ կուտայ կամ կ'առնէ նամակները, քեզի հաճելի երեւի այնքան իր գեղեցկութեամբ որքան իր բարեացակամութեամբ, ջանացիր է՞ն առաջ ձեռք անցնելու անոր տիրուհին, — միւսը վերջէն պիտի գայ: Սէրը պէտք չէ սպասուհիով սկսիլ: Միտքդ պահէ միայն, եթէ որ և է հաւատ ունիս իմ արուեստիս վրայ, թէ պէտք է կամ բնաւ չփորձել ձեռնարկը կամ մինչեւ վերջը տանիլ: Սպասուհին ա՛լ քեզ չպիտի մատնէ, այն օրէն ուր ան կիսովին մասնակից է քու յանցանքիդ: Գործը մի՛ լքեր,

և միայն յաղթական ետ քաշուէ։ Այն ատեն, քեզ մեղ-
սակից՝ ան պիտի չմատնէ քեզ, և դուն տեղեակ պիտի
ըլլաս սիրուհիիդ թէ՛ գործերուն թէ՛ խօսքերուն։ Բայց
խիստ գաղտնապահ եղիր,— եթէ ծախուած սպառուհին
իր լեզուն լաւ բռնէ, գեղուհիդ ա՛լ քեզի համար խոր-
հուրդ պիտի չունենայ։

Խոստումներ ըրէ.— դուն ոչինչ կը կորսնցնես խոս-
տանալով։ Ամէն մարդ կրնայ հարուստ ըլլալ խոստում-
ներով։ Յոյսը, եթէ մարդ անոր հաւատայ, երկար ատեն
կը տևէ,— խարուսիկ է ան, անշուշտ, բայց սիրելի
է մեզի։ Եթէ բան մը տաս, վախ կայ որ ճամբու դրուխ,
շահագիտական ակնկալութեանդ համար, կինը պիտի պահէ
քու պարգեւներդ և բան մը կորսնցուցած պիտի չըլլայ։
Բայց միշտ ջանացիր այնպէս երևնալու թէ տալու
վրայ ես այն բանը զոր չես տար երբեք։ Կարեւոր կէտը,
ճանր խնդիրը, առաջին համըրը մը առնելն է, առանց
բան մը վճարած ըլլալու։ Այն ատեն, տուածը ուրիշ
անգամ ձրի չտալու յոյսով, սիրուն արարածը՝ զայն դարձ-
եալ պիտի շնորհէ քեզի։

Թող քու նամակներդ վստահութիւն ներշնչին, թո՛ղ
մտերմական ոճ մը ունենան, բայց անուշ, և թող կար-
դացողը կարծէ թէ՛ դուն իսկ կը խօսիս։ Եթէ կինը սի-
րատումներդ մերժէ և քեզ վերագարծնէ առանց կարգա-
ցած ըլլալու, յուսա՛ թէ օր մը գրածներդ պիտի կար-
դայ և յամառէ՛ ձեռնարկիդ մէջ։

Կարդաց և չուզե՞ր պատասխանել։ մի ստիպեր զայն։
միայն ջանա, որ ան շարանակէ կարդալ, պիտի հաճի
նաև պատասխանել,— այս ամէնը պիտի գայ հեզհետէ
և իր ատենին։

Գուցէ նախ քեզի պիտի հասնի բարկացոտ նամակ
մը քեզ յանձնարարելով որ հաճիս վերջ տալ հետապըն-
դումներուդ։ Բայց կինը կը վախնայ իր փափաքածէն և
կը մաղթէ այն գոր չփափաքիր, հասկնալու համար քու
հաստատակամութիւնդ։ Յամառէ՛ և քիչ ատենէն ըզձանք-
ներդ պիտի պսակուին։

Ժամանակդ մի վատնէր մագերդ երկաթով ոլորելու,
ո՛չ ալ դեղերով մըրթդ փայլեցնելու։ Անխնամ՝ գեղեց-
կութիւն մըն է որ կը վայելէ էրիկ մարդուն։ Միռէ
մաքրութիւնը, կիզէ մըրթդ Ֆիզիքական մարզանքներով։
Կրէ վայելուչ հագուստ մը առանց արատի։ Թող լեզուդ
ուսոյց քննելով լեցուն չըլլայ և թո՛ղ ակումներդ զերծ
ըլլան դեղին աղտէն։ Թող ոտքդ չլողայ շատ լայն կօշիկի
մը մէջ։ Թող անձարակ կտրուածք մը չտեղեկցնէ քու
խիտ մաղերդ, այլ ճարտար ձեռք մը ըլլայ մագերդ
կտրողը։ Թող խնամով կտրուած եղունքներդ ո՛չ մէկ
աղտոտութիւն կրնն։ Թող բերանդ ո՛չ մէկ գէշ հոտ գուրս
տայ և թող գեղուհիիդ բուրմունքը չապականի անշահ
հոտով մը։ Չգէ վաւաշոտ կիններուն մնացածին հոգը։

Ահա տեսակցութեան վայրկեանը։ Հեռու ասկից,
գեղջկական ամօթխածութիւն։ Ուժը և Աստղիկը հա-
մարձակին կը ժպտին։ Միտք չունիմ քեզ սորվեցնելու

ճարտասանութեան կանոնները. կը բաւէ որ սկսիս, մնացածը պիտի գայ ինքնաբերաբար: Պէտք է որ սիրահաւերին դերը կատարես և նկարագրես քու վէրքդ: Կարելի ամէն միջոցով, ջանա՛ գայն համոզել: Շատ դիւրութեամբ պիտի հաւատայ քեզի. ամէն կին ինքզինքը սիրուն կը գտնէ, և էն տգեղը գոհ է իր տեսքէն: Յաճախ, սակայն, ան որ սէրը կը կեղծէ ի վերջոյ կը սիրէ լըջօրէն և կըլլայ իր նախապէս կեղծածը: Հետեւաբար, սիրուն օրիորդներ, ներողամիտ եղէք անոնց հանդէպ որ սիրահարի դերը կը կատարեն: Իրենց զգացումը՝ վայրկեան մը առաջ ստողը պիտի փոխուի անկեղծ զգացումի: Ատենէն է սպըրդելու գեղուհիի սրտին մէջ շողոքօրդութեամբ, ինչպէս ջուրը կը թափանցէ իր ափունքին: Մի վարանիւր գովելու իր դէմքը, իր մագերը, իր իլաձեւ մատները և իր սիրուն օտքը: Էն պարկեշտը կը գրաւուի այն ներքողներէն որոնք կ'ուղղուին իր գեղեցկութեան և կոյսերը կը փափաքին որ հրապուրիչ արտաքին մը ունենան:

Երկչոտ մի՛ ըլլար խոստումներուդ մէջ, — խոստումները կը խանդավառեն աղջիկները: Աստուածները վկայ բռնէ քու անկեղծութեանդ. խաղա անոնց հետ առանց խղճահարութեան: Խաբէ՛ խաբւողները, ասոնց մեծ մասը դաւաճան ցեղի մը կը պատկանի: Թող ինձան իրենց իսկ թակարդին մէջ:

Արցունքներն ալ իրենց ատելութիւնն ունին, — ատով է որ դուն պիտի կակուղցնես աղամանիդ: Զանա որ, եթէ կարելի է, սիրուհիդ այտերդ խոնաւ տեսնէ: Եթէ ար-

ցունքները պակսին — որովհետեւ անոնք միշտ փափաքուած վայրկեանին չեն գար — [Թրջէ աչքերդ մատներովդ:

Ո՛րն է այն փորձառու դարպասողը որ համբոյրով մը չհաստատէ իր շողոքօրթութիւնները: Եթէ սիրուհիդ չտար գայն, դսւն ա՛ռ ամէն գնով: Սկիզբները գուցէ պիտի բարկանայ և քեզի չար պիտի կոչէ. բայց դէմ կենալով հանդերձ՝ ան տեղի պիտի տայ: Միայն հոգ տար որ հապճեպով առնուած համբոյրներդ չվիրաւորեն իր քնքուշ շրթները: Այն սիրահարը եթէ համբոյր մը առած է եթէ չառնէ մնացածը, արժանի է կորսնցնելու այն շնորհներն ալ զոր ստացած է: Այս համբոյրէն վերջ, ի՞նչ կը պակսէր քեզի ուրեմն որ բոլոր տենչանքներդ չի կատարուեցան: Աւա՛ղ, դուն առաքինի չեղար, այլ պարգապէս տիմար: Ատիկա բռնութիւն եղած պիտի ըլլար, կ'ըսես: Բռնութիւնը հաճելի է կիններուն: Այն բանը զոր կը սիրեն տալ, յաճախ կ'ուզեն որ խլուի իրենցմէ: Չկայ կին մը որ երջանիկ չըլլայ սիրոյ յանդուգն ձեռնարկներուն զոհը եղած ըլլալու համար, և համարձակութիւնը իրեն պարգեւի մը տպաւորութիւնը կ'ընէ: Բայց այն կինը որ, իր դէմքին վրայ եթէ ուրախութիւնը ցոլացնէ, սրտին մէջ տխրութիւնը կը կրէ:

Սիրահար մը պէտք է տփգոյն ըլլայ, — տփգունութիւնը սիրահարներուն վայել, անհրաժեշտ երեսի գոյնն է: Նիհարութիւնը կը յայտնէ նմանապէս իր հոգեկան զգացումները: Իդէներուդ պսակումը տեսնելու համար, ջանա որ գուր շարժես, որպէս զի բեկ տեսնելով ամէն մարդ կարենայ բացագանչել, — «Կը սիրէ»:

Մի՛ գործածե՛ր նոյն միջոցները ամէնուն հանդէպ: Ծեր եղինկ մը հեռուէն կը նշմարէ թակարդները: Եթէ շատ գիտուն երեւառ նորահասի մը կամ շատ կրակոտ՝ խոհեմի մը, մին և միւսը պիտի գգուշանան քեզմէ: Ահա թէ ինչու, այն կինը, որ կը վախնայ յանձնուելու պատուաւոր մարդու մը, անձնատուր կ'ըլլայ կոպիտի մը գգուանքներուն:

Գ.

Ինչպէս կը պահուի յաջողութիւնը

Հեռուէ քեզմէ մեղապարտ կեղծիքը: Սիրուելու համար, հեզահամբոյր եղիր: Եւ ասոր համար ո՛չ գեղեցիկ դէմք մը և ոչ ալ գեղեցիկ ձեւ ու հասակ մը պիտի բաւեն: Սիրուհիդ քեզի կապելու և երեսի վրայ ձգուելու անակնկալը չունենալու համար, մաքի ձիրքերը միացուր մարմնի առաւելութիւններուն: Գեղեցիկութիւնը դիւրաբեկ հարստութիւն մըն է. քանի տարիքիդ մէջ յառաջանաս, այնքան ան պիտի նսեմանայ,—միայնատեն մը կը տեսէ ան: Սիրուն երիտասարդ, քիչ ատենէն մազերդ պիտի ձերմկին. քիչ ատենէն խորշոմները պիտի դան ահօսելու մարմինդ: Չարիքին առաջքը առնելու համար, ժամանակէն չազդուող միտք մը կազմէ դուն քեզի: Միայն այս օր է որ մեզի կ'ընկերանայ մինչեւ մեր վերջին օրը: Տեւական սէր մը ունեցիր գեղարուեստի և ֆրանսերէն լեզուին:

Ամէն բանէ առաջ նուրբ հաճոյակատարութիւնն է որ սիրտերը կը գրաւէ: Անտաշութիւնը և կծու խօսուածքը ատելութեան պատճառ կ'ըլլան: Հեռու քեզմէ ընդդիմախօսութիւնը և խայթիչ բառերը,—սէրը քաղցր է և կը սնանի քնքուշ բառերով: Առիւով է որ կը վտարէ կինը իր ամուսինը և ամուսինը իր կինը: Այսպէսով կը կարծեն թէ մէկզմէկէ վար չեն մնար: Ասիկա վայել է արդէն ամուսիններու, վէճերը ամուսնութեանց բաժինը ըլլալով. բայց թող սիրուհի մը միայն անուշ խօսքեր լսէ: Գուր օրինական պարտքի մը համար չէ որ մտած էք նոյն անկողինը,—ձեզի համար, օրէնքը, սէրն է:

Եթէ սիրուհիդ շատ ժպտասէր չերեւայ, եթէ հաճոյակատար չէ քեզի համար որ զինք կը պաշտես, հանդուրժէ՛ և համբերէ՛. պիտի մեղմանայ ան: Համբերութիւնը կը յաղթանակէ Ափրիկէի վագրերուն և առիւծներուն: Քեզմէ պահանջուածը ընել կեղծէ: Մի հաւնիր այն բանին զոր ան չհաւնիր. եթէ ան բան մը գովէ, գովէ՛. կրկնէ ինչ որ կ'ըսէ ուրացիր ինչ որ կուրանայ: Կը խնդայ՞ դուն ալ խնդայ, կուլայ՞, լաց քու կարգիդ: Քու դէմքդ կարգաւորէ իրենին համեմատ:

Բռնէ անոր վրայ իր հովանոցը, ճամբայ մը բաց իրեն բազմութեան մէջէն: Մութա աթոռակ մը բշլու իր անկողինը քով: Քաշէ իր կօշիկները և կոմ անցուր զանոնք իր նազեղի ոտքին: Երբեմն ալ, երբ դուն իսկ կը սառիս, պիտի ստիպուիս կուրծքիդ վրայ տաքցնելու իր պաղած ձեռքերը:

Քեզի հրամանն տրուած է հրապարակին վրայ գըտնուելու: ջանացիր ժամադրութեան ներկայ ըլլալ որոշուած ատենէն առաջ և մեկնիլ շատ ուշ ատեն միայն: Եթէ սիրուհիդ կը պահանջէ որ ուրիշ տեղ երթաս շուտով, ձգէ ամէն բան, վազէ և թող բազմութիւնը չյամբեցնէ քու քայլերդ: Իրիկունը, ինձոյքէ մը վերջ, իր տունը վերադառնալու պահուն, եթէ գերի մը փնտռէ, ըսէ թէ պատրաստ ես իրեն ծառայելու: Գիւղագնացութեան գացած ես և կը գրէ քեզի.— "Եկո՛ւր": Եթէ կառք չգտնես, ոտքով կտրէ ճամբան,— սէրը կ'ատէ ուշացողները: Մի ուշանար ոչ գէշ օրէն, ոչ տօթին իսանձումէն, ոչ ալ ձիւնէն ճերմկած ճամբաներու պատճառաւ:

Սէրը պատերազմի պատկերն է. ետ քաշուեցէք, դուք, երկչոտներ,— իր դրօշը պէտք չէ որ ձեզմով պաշտպանուի: Խաւտորը և ցուրտը՝ երկար գնացքները և անգութ տանջանքները, բոլոր վիշտերը կը սաւառնին բանակատեղիին վրայ:

Մէկ կողմնետէ քու հպարտութիւնդ, եթէ փափաքսդ՝ ես տեւական սիրոյ մը: Եթէ հաստատօրէն և դիւրութեամբ չես կրնար հասնիլ նպատակիդ, եթէ ամուր գոցուած դուռ մը արգելք կ'ըլլայ անցքիդ, իջիր տանիքէն, արձակ համարձակ, և կամ սպրդէ գաղտնաբար բարձր պատուհանէ մը: Սիրուհիդ ուրախ պիտի ըլլայ ինքզինքը պատճառը նկատել այն վտանգին որուն ենթարկուեցար. այդ իրեն համար սիրոյդ աներկբայ ապացոյցը պիտի ըլլայ:

Ես չեմ պատուիրեր քեզի որ թանկագին ընծաներ տաս սիրուհիդ: տուր ոչինչ բաներ, բայց լաւ ընտրէ զանոնք: Երբ դաշտերը կը պարզեն իրենց հարստութիւնը, երբ բեռնաւորուած ոստերը դէպի հոգ կը հակին, թող երիտասարդ ծառայ մը անոր տանի սակառի մը մէջ այդ գեղջկական նուէրները,— դուն պիտի կրնաս իրեն ըսել թէ արուարձանի մը պարտեղէն եկած են, թէ եւ անշան փողոցէ մը գնած ըլլաս զանոնք:

Արդեօք պատուիրե՞մք չաւ որ սիրուհիդ զգալուն տաղեր հասցնես: Աւա՛ղ, ոտանաւորները բնաւ յարգ չեն վայելեր: Մարդիկ ատոնց գովասանքը կ'ընեն, իրաւ է. բայց միայն այդքան: Բարբարոս մը, կը բաւէ որ հարուստ ըլլայ, սիրուելիք կողմ մը պիտի ունենայ: Իրաւ որ ոսկեդարու մէջ կ'ապրինք,— ոսկիին է որ նախ մեծաբանքներ կ'ուղղուին: Ոսկիով է որ սէրը կը գնուի: Գուն իսկ, Հոմերոս, եթէ գայիր մոսսաներուն ապաւինելով, եթէ մարդերուն ներկայանայիր ձեռնուռայն, որքան ալ Հոմերոս մը՝ դուն պիտի վաճառուէիր: Կան սակայն կիներ —ասոնց խումբը շատ նիհար է—որոնք զարգացումի տէր են. մնացածները տգէտ են, բայց կ'ուզեն ցուցնել թէ չեն: Թէ ինչու ոտանաւորներդ գտնոնք պէտք են երգել նոյն աստիճանին վրայ: Կարդալու ատեն, ինչ տեսակ որ ըլլան, անոնց արժէքը աւելցուր ներդաշնակ ընթերցումով մը: Հմուտներու կամ տիմարներու ուղղուած ըլլայ՝ բանաստեղծութիւնդ գուցէ պզտիկ պարգեւի մը տպաւորութիւնը պիտի ընէ անոնց վրայ:

Մանաւանդ, երբ դուն պիտի ուղես ընել բան մը որ քեզի օգտակար կը թուի, ջանայ որ սիրուհիդ խնդրէ զայն քեզմէ: Թող ան երախտապարտ ըլլայ քեզի այն բանին համար որ դուն որոշած էիր ընել: Դուն օգուտը պիտի ունենաս, ինքը պատիւը:

Եթէ սիրուհիդ սէրը երկար ատեն վայելելու կը փափաքի, այնպէս մը ըրէ որ քեզ իր գեղեցկութենէն շլացած կարծէ: Զմայլէ իր թեւերուն վրայ երբ ան կը պարէ, իր ձայնին վրայ՝ երբ ան կ'երգէ, և երբ ան լռէ, դժգոհութիւն յայտնէ դառնօրէն: Իր անկողնին վրայ քեզ ներքի պիտի ըլլայ պաշտելու ինչ որ քեզ կը դիւթէ, և զողդոջ ձայնով մը, շեշտելու երանութիւնդ: Եթէ շլացուի Մէտիւպէն աւելի չար իսկ ըլլար, քեզ հանդէպ պիտի մեղմանայ և տանելի պիտի դառնայ, բաւ է որ դուն կեղծես և դէմքդ չհերքէ խօսքերդ: Պարտկուելով կեղծիքը արդիւնաւոր կ'ըլլայ մերկացում՝ նուաստացում կը պատճառէ և իրաւամբ կը խորտակէ վերջնականապէս մատահութիւնը:

Մի քաջուիր այն հիւանդութիւններէն որուն կրնայ դժբաղդաբար նշմարկուիլ սիրականդ: Ըրէ քու իսկ ձեռքովդ, այն ամէնը զոր ան թոյլ պիտի տայ, Թող հեծկտալդ տեսնէ, թող համբոյրներդ ուէ զզուանքի յաղթահարեն և թող արցունքներդ իր չորցած շրթունքները թրջեն: Ամէն անգամ որ առիթը պիտի ունենաս, հնարէ սիրովիչ երազներ զոր անոր պիտի պատմես: Սակայն, թող ծառայելու փութանութիւնդ հիւանդը անհանգիստ չընէ: Մի արգիլեր զինք ուտելէ ոչ այ իրեն ներկայացուր դառնահար ըմպելիք մը, այս հոգը ձգէ մրցակցիդ:

Սէրը անորոշ է սկզբնաւորութեան, գործածուելով ոյժ կը ստանայ: Եթէ զինք լաւ խնամես, ժամանակին հետ հաստատուն պիտի ըլլայ: Այնպէս մը ըրէ որ սիրուհիդ վարժուի քեզի, — վարժութեան ըրածը ոչ մէկ բան կրնայ ընել: Զայն գրաւելու համար, ոչ մէկ ձանձրոյթի առջեւ մի ընկրկիր: Թող քեզ անդադար տեսնէ, թող միայն քու ձայնդ լսէ: Գիշեր ցերեկ իր աչքին առջեւ եղիր: Երբ լաւ մը գտահ ըլլաս թէ կրնայ քու ներկայութիւնդ փնտռել, հեռացիր, որպէսզի բացակայութիւնդ հոգ պատճառէ իրեն: Դադար տուր իրեն. հանգստացած արտը տոկոսով կը վերադարձնէ իրեն յանձնուած սերմերը և ծարաւի հող մը անյագարար կ'ըմպէ երկինքին ջուրերը:

Լաւ է բացակայութիւնդ չերկարելու կարօտը ժամանակին հետ կը տկարանայ: Բացական կը մոռցուի և նո՛ւ սէր մը ծնունդ կ'առնէ: Մինչդեռ Մենեւլաս հեռու տեղ է, Հէլէն, մինակ չպառկելու համար, կը սպրդի, գիշերը, իր հիւրին տաքուկ անկողինին մէջ: Թող Մենեւլաս ուզածը ըսէ, և կը ներեմ Հէլէնին իր մեղքը, — ան օգուտ քաղեց չափեն աւելի թոյլատու ամուսնի մը հաճոյակատարութենէ:

Այն իժը զոր անուշադիր ոտք մը կը կոխուտէ, այնքան սոսկալի չէ որքան այն կինը որ իր ամուսնին անկողնին մէջ մրցակից մը երեւան կը հանէ: Ան կը բռնկի և իր դէմքը կը յայտնէ հոգիին հրդեհը: Կը նետուի կրակի և բոցի վրայ և մոռնալով ամէն նկատում, կը վազվուտէ ասդին անդին, Անի Ատուածոյ եղջիւրէն զարնուածի պէս: Բայց, փառք Տիրոջ, ասկէ չհետեւիր թէ պէտք է միայն



մէկ կնոջ սիրով բաւականանալ: Ամուսնացած կին մը հազիւ թէ կրնայ բռնել այսպիսի յանձնառութիւն մը: Զուարճացիր, բայց միայն գաղտագողի մեղանշէ, մարդ պէտք չէ որ իր յանցանքով պարծենայ: Կնոջ մը մի տար ասիականի նուէր մը որ կարենայ ծանցուիլ ուրիշ կնոջ սը կողմէ փոխէ՝ ձեր տեսակցութիւններուն ժամերը, և որպէսզի ան չկարենայ քեզ յանկարծակիի բերել ուրիշի մը հետ ծանօթ թաքստոցի մը մէջ, միշտ միեւնոյն տեղը մի երթար: Ամէն անգամ որ պիտի գրեռ, ուշադրութեամբ վրայէն անցիր գրած նամակիդ, ինչու որ շատ մը կիներ իրենց ըստածէն աւելին կը կարդան:

Եթէ, հակառակ զգուշութիւններուդ, յանցանքդ երեւան գայ, որքան ալ բացայայտ երեւնայ, ուրացիր գայն մինչև վերջ: Այն ատեն սովորականէն ո՛չ աւելի հլու եղիր, ո՛չ աւելի շողոքորթ. այդպիսի փոփոխութիւններ յանցաւոր սրտի մը ճշմարիտ յայտարարն են: Բայց մի՛ խնայեր կողերուդ. քու փրկութիւնդ խորանարդային կարողութեան մը մէջ է որ պիտի հերքէ նախորդ քաջագործութիւններդ. . . Քեզի չար փոյսեր յանձնարարողներ պիտի ըլլան, ինչպէս կողերունը: Իմ կարծիքովս, անոնք թոյն են: Ոմանք պղպեղը կը խառնեն եղիձի կծու հատիկին հետ կամ դեղին իգարողը հին գինիին, բայց խռովտ Երկրի ստուերոտ ըլրակներուն վրայ բնակող աստուածուհին թոյլ չտար որ իրեն յետակ վայելքներուն մէջ մարդիկ իրենք զիրենք բռնադատեն: Գործածէ այսու հանդերձ այն ձերմակ սովոր որ կուգայ Մէկար քաղաքէն, մեր պարտէզներուն արտադրած գրգռիչ խոտը և հաւելիժը: Հիմէթի

մեղրէն կեր և այն պտուղները զոր կը կրէ, իր տերեւութիւն մէջ, նրբասաց շոճին:

Գուն որ պատուէրիս վրայ քիչ շատ կը պարտէրի անհաւատարմութիւնդ, փոխէ ուղիդ և կրկին իմ պատուէրիս վրայ, բացէ ի բաց պատմէ շահագործութիւններդ: Կիներ կան որոնց հանդէպ շատ օգտակար չէ երկչոտ փաղաքշտութիւն մը և որոնց սէրը թոյլ կ'ըլլայ առանց մրցակցի մը վախին: Պէտք է զանոնք թոթուել ազդու գրգռիչով մը:

Ջանայ որ սիրուհիդ մտահոգ ըլլայ քու մասիդ և վերստին տաքցուր իր պաղելու վրայ եղող սիրտը: Թո՛ղ զոյնը նետէ քու անհաւատարմութեանդ ապացոյցին առջև: Ո՛հ, անհաշուելի անգամ երանի անոր որուն սիրուհին կը գանգատի նախատուած ըլլալէ:

Ո՞րքան ատեն, պիտի հարցնես ինձի, պէտք եմ զինք թողուլ որ իր վիշտէն գանգատի: Կարճ ատեն միայն, ինչու որ մի գուցէ իր սրգողումը երկարելով, զայրոյթի փոխուի: Եւ ատեն է որ, նետես թեւերդ իր ձերմակ պարանոցին շուրջ և մինչդեռ ան կը բղձկի, սխմես գայն կուրծքիդ վրայ: Կուլայ, համբոյրներ տուր իրեն. կուլայ, տուր իրեն սիրոյ ուրախութիւնները և խաղաղութիւնը պիտի կնքուի. անկա էն լաւ միջոցն է իր բարկութիւնը իջեցնելու: Այն պարագային ուր չափազանց զայրացած պիտի ըլլայ և թշնամանքը բացայայտ, աշխատէ խաղաղութիւնը կնքելու իր անկողին վրայ. պիտի կակուղնայ ան: Մարմնոյ քողազուրկ ձեւեր, հոգ է որ կը բնակի համեմատութիւնը, հոն է որ, եթէ կը հաւատաս ինձի, ծնունդ առաւ ներումը:

Ինքզինքը ճանչցողն է միայն որ իմաստուն կերպով կը սիրէ և իր ձեռնարկները իր ուժերուն վրայ կը չափէ։ Եթէ բնութիւնը իրեն գեղեցկութիւնը շնորհած է, թող օգուտ քաղէ անկէ։ Եթէ աղօտոր մորթ մը ունի, թող պառկի յաճախ մերկ ուսերով, եթէ լեզուովը հաճելի կը դառնայ, թող խոստափի տխուր լռութենէն, եթէ լաւ կ'երգէ, թող երգէ, իսկ եթէ դիմացկուն խմող մ'է, թող խմէ։

Սիրոյ մէջ, հաճոյքները հազուագիւտ են, ցաւերը բազմաթիւ։ Կէտք է աչքի առնել շատ վիշտերու ենթարկուիլը։ Քեզի պիտի ըսուի որ սիրուհիդ դուրս ելած է, երբ գուցէ դուն զայն պատուհանէն նշմարած ես, համոզէ ինքզինքդ թէ դուրս ելած է և թէ դուն սխալ տեսած ես։ Ան քեզ խոստացած է իր գիշերը, բայց իր դուռը գոց է։ Համբերէ և պառկէ չոր հողին վրայ։ Գուցէ դեռ ստախօս սպասուհի մը պիտի ըսէ քեզի ամբարտաւանութեամբ, — «Ինչո՞ւ համար մեր դուռին անցքը կը գոցես»։ Փաղաքէ, պաղատագին, դուռին շրջանակները և կարծրասիրտ սպասուհին և զետեղէ սեմին վրայ, ճակատդ պսակող վարդերը։ Եթէ սիրուհիդ քեզ ուզէ, վաղէ-եթէ խոյս տայ քեզմէ, հեռացիր!

Համբերութեամբ կրէ մրցակից մը և յաղթանակդ ապահով է։ Սիրուհիդ անոր նշան կ'ընէ։ Համբերէ։ Կը գրէ, իր նամակներուն մի դպիր։ Թող ուզածին պէս երթայ դայ։ Թող տուր որ իր յանցանքը ծածկէ, ինչու որ մի գուցէ հարկադրուած խոստովանութիւն մը իրեն

ստովեցնէ ա'լ ամօթէ բնաւ չկարմրի։ Հետեւաբար զգուշացէք, երիտասարդներ, ձեր սիրուհիները մեղանչումի վրայ յանկարծակիի բերելու։ Թող մեղանչեն։ Բայց թող այնպէս կարծեն թէ ձեզ բառերով խաբած են։ Յանցանքի վրայ բռնուած՝ երկու սիրահարներ ալ աւելի կը սիրեն զիրար։ Այն վայրկեանէն ուր իրարու հետ բաղդակից կ'ըլլան, մին և միւսը կը յամառին այն բանին մէջ որ իրենց կորուստը կը պատճառէ։


Քիչ շատ տարիքնին առած կիները սիրելու արուեստին մէջ աւելի հմուտ են, անոնք ունին փորձառութիւնը միակ բանը որ լաւ գործաւորներ կը կազմէ։ Ասոնք արդուզարդով տեղը կը լեցնեն ժամանակին աւերին և կը յաջողին, խնամքներու շնորհիւ, ձեր չերեւնալու։ Ճաշակիդ համեմատ, ասոնք սէրը պիտի այլադանին հազար ձեւերով, — ոչ մէկ նկարիչ պիտի չկրնար գանել այդքան աարբեր գիրքեր։

Հաճոյքը ասոնց մօտ կը ծնի առանց գրգռիչ նախազգուշութեան, և ինչ որ մանաւանդ զմայլելի է, էրիկ մարդը և կինը նոյն գնացքով կը յառաջանան։ Ես կատեմ այն համբոյրը ուր երկուքն ալ չեն սիրտիւր միաժամանակ։ Թէ ինչու ես աւելի քիչ կ'ազգուհիմ աղջկան մը համբոյրներէն։ Ես պժգանք կ'զգամ այն կիներն, որ ինքզինքը կուտայ, որովհետեւ ստիպուած է տալ և որ անգամ կը մտածէ իր «Ֆիւլօ»ներուն վրայ։ Այն հաճոյքը որ ինձ կը տրուի պարտականութեան բերումով, ոչ մէկ ակորոժելի բան մը ունի։ Թող ոչ մէկ կին ինձ հանդէպ չկատարէ այդ պարտականութիւնը։

Քաղցր է ինձ լսել ձայն մը որ վայելքը կը մատնէ որ ինձ կ'աղաչէ ուշացնել և երկարել հաճոյքը: Ես կը դիտեմ այն ատեն տարփալից սիրուհիս նուաղուն աչքերը. ան կը թալկանայ և երկար ատեն կ'արգիլէ զիս իրեն դպելու:

Հաւատա ինձ, Վէնիսի հաճոյքը պէտք չէ փութացնել, այլ ճարտար յապաղումներով, անոր դանդաղօրէն հասնիլ:

Երբ դուն գտած պիտի ըլլաս այն կէտերը դպելէդ կինը հաճոյք կ'զգայ, թող ամօթխածութիւնը քեզ չարգիլէ ձեռք երկարելու ատոնց: Դուն պիտի տեսնես իր աչքերուն փայլիլը բաբախուն բոցով մը, ինչպէս այն արեւը որ կը փայլի ալիքի մը մէջէն: Յետոյ պիտի գան տրտունջի խօսքերը, յետոյ անուշ մրմունջ մը, յետոյ հեշտին հեծեծանքները և ձեր խաղերուն հետ ներդաշնակ բառերը: Բայց մի՛, առաջ վաղելով, սիրուհիդ ետ թողուլ, և թող ան ալ նոյնպէս քեզմէ աւելի չյառաջանայ: Գացէք նպատակին միասին: Հեշտանքը այնքան աւելի կատարեալ է միայն որքան որ կինը և մանչը պարտասած կ'իյնան միաժամանակ:



ԱՂԶԻԿՆԵՐՈՒՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ



Ուաքինութիւնը կին է, և հագուստով և անուանով,— տարօրինակ չէ ուրեմն որ իր սեռին նկատմամբ նպաստաւոր ըլլայ: Բայց ես միայն թեթեւ սէրերը պիտի ուսումնասիրեմ և կնոջ պիտի սորվեցնեմ ինքզինքը սիրցընելու արուեստը:

Երբ տակաւին ձեր ձեռքն է և երբ կեանքի գարնան մէջն էք, ձեր ատենը լաւ անցուցէք. տարիները կ'անցնին կերթան ալիքին պէս: Պիտի գայ օր մը ուր դուն, որ այսօր կը մերժես սիրահարդ, դուն պիտի տարածուիս, ցուրտ և խորշումած, ամայի անկողնիդ վրայ: Մի զլանար ուրեմն հաճոյքը այն սիրահարներուն որ զայն կը խնդրեն:

Եթէ քեզ խարին ի՞նչ կը կորսնցնես: Ամեն ինչ կը մնայ քեզի: Թող քեզմէ հազար բան գողնան, դուն ատով

պիտի չաղքատանաս: Երկաթը կը բարակնայ շփումէն, խճաքարը կը մաշի. բայց դուն այդպիսի բանէ մը վախ- նալու ոչինչ ունիս անձիդ այդ մասին համար!:

Գեղեցկութիւնը աստուածներուն մէկ ընծան է. բայց քանի՞ կիներ կրնան հպարտանալ իրենց գեղեցկութեամբ! Չեզմէ շատերուն չէ վիճակած այս թանկագին նուէրը: Այսուհանդերձ արդուզարդի խնամքները պիտի աղւորցնեն դէմք մը որ կը թառամի անհոգութեան մէջ:

Թող ձեր մազերը անխնամ չըլլան, իրենց սիրունու- թիւնը կախում ունի գանոնք կարգադրող մատներուն աւելի կամ նուազ ծարտարութենէն: Հագար տարբեր վարսածեւեր կան. թող իւրաքանչիւրը ընտրէ այն որ իրեն ամէնէն աւելի կը վայելէ, և թող նախ իր հայելին դիմէ: Չուսածեւ դէմք մը կը պահանջէ պարզ ձեղք մը մէջտեղը. կլոր դէմքի մը աւելի, գլխուն ծայրը, թեթեւ հանգոյց մը կ'երթայ, և որ ականջները բացը թողու: Ուրիշ մը ոլորտներուն ուսերուն վրայ ծփալ պիտի տայ, ուրիշ մը գանոնք պիտի վերցնէ Տիանի ձեւով, Աս՝ դա- նոնք ազատօրէն պիտի յանձնէ հովին. ան գանոնք պիտի ժողվէ քունքերուն վրան:

Ասով հանդերձ մազերու անխնամ ձեւ մը կ'երթայ շատ մը կիներու տեսնողը նախորդ օրուընէ մնացած պիտի կարծեր, և դեռ նոր յարգարուած են: Արուեստը պէտք է կեղծէ պատահմունքը:

Ընտրեցէք ձեր հագուստներուն գոյնը. նոյն երանդ-

ները զիրար չեն բռներ: Սեւը կը վայելէ խարտեաշին և ձերմակը թուխին:

Չեզի գրեթէ պիտի պատուիրէի հոգ տանելու որ ձեր անութները գարշահոտ չըլլան, ոչ ալ ձեր ազդրերը անողորմ՝ մազերուն երեսէն: Բայց կովկասի աղջիկներուն չէ որ կ'ուսուցանեմ, ոչ ալ անոնց որ Գայիքի ջուրերէն կը խմեն:

Յանձնարարե՞մ ձեզի որ երբեք չձգէք անհոգութեամբ որ ձեր ակռաները սեւնան կամ որ առտուն երբեք չի լուաք ձեր բերանը կասկածելի ջուրով մը: Դուք լաւ գիտեք սպիտակագեղէն փոխ առնելու ձերմակութիւնը և կարմիր դնելու հոն ուր արիւնը չէ դրած բնան: Դուք շինծու կերպով կը լեցնէք ձեր յօնքերուն բացը և օդ- միթիկի թեթեւ խաւով մ'է որ կ'արգիլէք ձեր այտերուն յայտնելու ձեր տարիքը: Դուք չէք ամչնար ձեր աչքերը ստորագծելու ածուխի կամ քրքումի գիծով մը:

Պէտք չէ որ այսուհանդերձ ձեր սիրահարը յանկար- ծակի բերէ սեղանին վրայ ձեր տուփերը. թող ձեզ գեղեցկացնող հնարքը անշմար մնայ! Անոր յայտնու- թիւնը հաճելի չէ: Շատ բաներ, արդէն մեզի անախորժ կուգան երբ անոնց կատարուիլը կը տեսնենք. ըլլալէ վերջ՝ կը հաւնուին անոնք:

Քողարկէ մարմնոյդ թերիները: Եթէ կարճ ես, նստէ, թէ չըլլայ որ ոտքի վրայ նստած կարծուիս: Եթէ գաճաճ ես, երկնցիր անկողնիդ վրայ. բայց հոն ալ, որպէս զի չի կարենան քու չափդ առնել, այնպէս մը ըրէ որ հա-

գուստններդ ոտքերդ պահեն: Թող շատ բարակ կինը հաստ կերպասներ գործածէ, և թող լայն վերարկու մը կախուի ուսերէն: Թող դալկադէմը ծիրանիով ներկէ իր մորթը. թխագոյնը՝ կոկորդիլոսի ճարպին դիմու՛մ ընէ: Թող ախեղծ ոտք մը ճերմակ կօշիկի մը մէջ պահուըտի, և թող չոր սրունք մը երբէք արեւու երես չտեսնէ:

Բարակ բարձիկներ տգեղ ուսերը կը սրբագրեն: Փարթամ կուրծքի մը էշարբ մը կը վայելէ: Այն կինը որ հաստ մասներ ունի և անողորկ եղունգներ, թող իր խօսքերը քիչ անգամ շեշտէ շարժուձեւերով: Ան որ ծանր շունչ մը ունի երբէք անօթի փորով պիտի չխօսի, և միշտ քիչ մը հեռու պիտի կենայ իր խօսակցին դէմքէն:

Եթէ ակռաներդ սե են, կամ շատ երկար, կամ անկարգ, խնդուքը քեզ ամենամեծ սրտնեղութիւնը պիտի պատճառէ:

Ո՞վ պիտի հաւատար, որ երիտասարդ աղջիկները խնդալ ալ կը սորվին, և այս տրուեստը իրենց նոր հրապոյր մը կուտայ: Թող բերանին փոքր բացուի, թող պղտիկ փոսիկներ կազմուին այտերնուն, և թող իրենց վարի շրթունքը ծածկէ ակռաներուն ծայրը:

Արուեստը ո՛ւր պիտի չմտնէ. կինները կը սորվին հաճելիօրէն լալու, և անոնք կրնան լալ երբ և ինչպէս որ կ'ուզեն!

Ի՞նչ պիտի ըսեմ անոնց մասին որ արտասանութեան անհրաժեշտ կարգ մը տառեր կը կլլեն, և որ լեզուին կը բռնադատեն կակազելու իրենց ուզածին պէս: Բառ

մը գէշ արտասանելով, թերութենէ մը հրապոյր մը կ'ընեն. պիտի կրնային անոնք լաւ խօսիլ, ու կը սորվին գէշ խօսելու:

Հաճելի բան մ'է երգը: Թող օրիորդները երգել սորվին, անուշ ձայն մը, շատերուն քով գեղեցկութեան տեղը կը բռնէ: Թող երբեմն կրկնեն թատրոնին մէջ լսուած ծանր կտորները, և երբեմն արեւելեան երաժշտութեան թեթեւ եղանակները: Աինք դաստիարակուած ըստ մեր բաղձանքներուն, պիտի գիտնայ աջ ձեռքով բռնելու ձգտող, ձախով՝ տաւիղը:

Ով պիտի տարակուսի թէ ես կը պահանջեմ երիտասարդուհիէն որ պարել գիտնայ և թողլով խնջոյքի բաժակը, կարենայ իր թեւերը շարժել ներդաշնակօրէն:

Հազար տեսակ խաղեր սորվեցէք աղջիկներ. ամօթ բան է եթէ խաղալ չգիտնայիք, յաճախ խաղալու ատեն է որ սէրը կը ծնի:

Թող գեղեցիկ կին մը աչքառու կերպով ներկայանայ հանրութեան. կնասէրներու մէջէն պիտի պատահի անշուշտ մէկը որ զինք պիտի առեւանգէ: Թող ամէն տեղ ան աշխատի սիրուն երեւնալու և թող իր միտքը ուրիշ հոգ չունենայ բայց եթէ իր աղուորութիւնը: Պատահմունքը կրնայ ամէն տեղ ծառայել. Աին՝ նետէ ուռ. կանգ շարունակ, էն չօպասուած վիճերուն մէջ ձուկեր կան: Յաճախ ամուսնի մը մեռելական թափօրին մէջն է որ նոր մը կը գտնուի. ասոր համար՝ կը վայելէ ցիրուցան մագերով երթալ և ազատ ընթացք տալ արցունքներուն:

Զգուշացէ՛ք, ով կիներ, այն մարդերէն որ բան գործ ըրած են շոշափելու իրենց հագուստները և գեղեցկու-
թիւննին, և յարգելէ՛ իրենց գլուխին վարպետ յօրին-
ուածքը: Ինչ որ կ'ըսեն ձեզի, հազար անգամ ըսած են
ուրիշներուն: Իրենց սէրը յեղյեղուկ է, և դժուար թէ
տեղ մը հաստատ կենայ: Ի՞նչ կրնայ ընել կին մը, երբ
էրիկ մարդը աւելի կնացած է քան ինք և որ կը փորձուի
նոյն իսկ աւելի սիրահար ունենալ:

Ախնէ՛ր, եթէ մարդիկ ձեզի շատ կը խոստանան,
նոյնչափ դուք ըրէ՛ք խօսքով: Եթէ առատաձեռն են, հա-
տուցանեցէ՛ք հաճոյքներով:

Թող աչքը-բաց սպասուհի մը ընդունի քու սիրու-
հիւիդ նամակները: Բայց քննէ զանոնք, կշռէ կարգացած
բառերդ, և գուշակէ թէ կը ստէ՞ ան կամ թէ իր աղա-
ջանքը բռնկած սիրտէ մը կը բղխի: Յետոյ մի՛ աճապա-
րեր պատասխանելու: սպասումը միշտ կը խթանէ սիրա-
հարը, եթէ սակայն շատ երկար չէ: Շատ դիւրութեամբ
մի խոստանար անձդ երիտասարդ խնդրարկուն: Ի փո-
խարէն, խստորէն մի մերժեր իրեն ինչ որ կը խնդրէ:
Այնպէս մը ըրէ որ ան յուսա և վախնայ միանգամայն
և թող ամէն մերժումիդ իր յոյսը աւելնայ և իր վախը
պակսի: Աղջիկներ, թող ձեր ոճը մաքուր ըլլայ, պարզ և
մտերմական: անհաճոյ բացատրութիւնները գուհիկ
խօսուածքին մէջ եղածներն են: Քանի քանի անգամներ,
կոպիտ լեզու մը փնտսած է մարմնոյն գեղեցկութեան:

Վախից'ը մրցակիցէ մը՝ պիտի յաղթանակես, կը

բաւէ որ մինակ ըլլաս: Ածողիկն ալ, կայսրութեանց պէս,
չգիմանար բաժանումի:

Ինչ որ կ'արգիլէ էրիկներուն սիրելէ իրենց կիները,
սա է որ կը մօտենան անոնց երբ որ կ'ուզեն:

Ծուղակիդ մէջ նոր ինկած սիրահարը թող նախ
հրճուի միայն ինքն ըլլալուն համար մահիճիդ մէջ մտնող:
Թող քիչ ատենէն կասկածի թէ շնորհներդ բաժնող
մրցակից մը ունի: Այս ռազմահնարքներդ մէկ կողմ
ձգէ, և իր սէրը պիտի նուազի: Իր կապանքէն ազատած
կայտառ ձի մը երբեք այնքան լաւ չի վազեր որքան երբ
հասնելիք և անցնելիք ուրիշ ձիեր կան: Վիրաւորանք
մը չափէն աւելի կ'արծարծէ մահամերձ հրահրալքը:
Ես իմ մասիս կը խոստովանիմ թէ այնքան աւելի կը
սիրեմ որքան զիս կը վիրաւորեն: Թող սիրահարը, այ-
սուհանդերձ, վշտակրելու շատ պատճառներ չունենայ,
և թող իր կասկածանքին մէջ իր գիտցածէն աւելին
չերեւակայէ:

Ան պիտի գրգռուի խորհելով երեւակայական ծա-
ռայէ մը գործ դրուած ամենախիստ հսկողութեան մը
կամ ամենախոժոռ ամուսնի մը գլխացաւ նախանձին
վրայ: Քանի հաճոյքը գիւրին է, ու այնքան կը կորսնցնէ
ան իր արժէքէն: Թայիսէն աւելի՞ ազատ ես, վախեր ե-
րեւակայէ: Աւելի յարմար է սիրահարդ գունեն ներս
առնել, անցուր զայն պատուհանէն, և թող դէմքդ կրէ
վախին՝ բոլոր նշանները: Թող սատանորդի սպասուհի մը
վազելով գայ և բացագանչէ, — «Վորտուած եմք»: դուն,

պահէ դողահար երիտասարդը ուր որ ըլլայ: Բայց թող իր սէրը ճանչնայ նաև առանց սրտագողի վայելքների, զի մի գուցէ ենթագորէ թէ գիշերներդ շատ սուղ են:

Եթէ շատ վստահող ես, ուրիշներ պիտի խլեն բեզմէ վայելքներդ և դուն նապաստակ մը տեղէն շարժած պիտի ըլլաս մրցակիցներուդ համար: Այս յօժարափոյթ բարեկամուհիդ որ քեզ կը մատուցանէ իր սենեակը և իր անկողինը, հաւատայ ինձ, նոյն տեղը հետը գտնուած է մէկէ աւելի անգամներ: Ծառայութեանդ մէջ ալ շատ գեղեցիկ սպասուհի մը մի ունենար, յաճախ ան պիտի կատարէ, ինձ հանդէպ, իր տիկինին դերը:

Ջանա՛ — և դիւրին բան է այս — որ մենք մեզ սիրուած կարծենք, — մարդ յիւրաւ կը հաւատայ իր փափաքածին: Թող կինը սիրազեղ նայուածներ ուղղէ երիտասարդի մը վրայ, թող խորունկ յառաջներ արձակէ, թող հարցնէ անոր ուշ գալուն պատճառները, թող իր հարցումին արտասուքներ և նախանձի շինձու կսկիծը միացնէ, թող եղունքներովը ճանկուտէ անոր երեսը: Տղամարդը շուտ պիտի համոզուի, և պիտի գթայ անոր վրայ. — «Ինձի համար խենդ կ'ըլլայ» պիտի ըսէ, մանաւանդ եթէ ինքնահաւան մ'է, եթէ ինքնիրեն կը ժպտի հայելիին մէջ և եթէ կը կարծէ որ կարող է սէր ներշնչել աստուածուհիներուն: Բայց, դուն, աղջիկ, ով որ ալ ալլաս, նախատինք մը թող քեզ միջակօրէն վրդովէ: Եւ մի կորսնցներ գլուխդ, մրցակցի մը լուրին: Մնաց որ շատ ալ դիւրահաւան մի ըլլար:

Ամէն ինչ գիտցիր, տուր մարմնիդ դիրքերը ըստ պարագաներու, — ամէն դիրք չի յարմարիր ամէնուն: Եթէ կինը դէմքով շատ գեղեցիկ է, թող դէպ ի հատու երկնայ: Անոնք որ հաճելի են իրենց կունակով, թող կունակի կողմէն ցոյց տան զիրենք: Մեղանիօն իր ուսերուն վրայ կը կրէր Ադուանդին սրունքները, այս դիրքը առէք, դուք որ գեղեցիկ սրունքներ ունիք: Թող պզտիկը հեծեալի դիրքով երթայ. շատ խոշոր ըլլալուն համար էր որ չէքթօրին կինը չհեծաւ բնաւ: Այն կինը որ իր երկար հասակովը կը մատնանշուի, ծունկերովը պիտի ծնչէ իր անկողինը, գլուխը թեթեօրէն մէկ կողմ հակած: Երիտասարդութեան գետտերը և անթերի ձիտ մը ունեցողին հետ, մարդը ոտքի վրայ պիտի կենայ, մինչդեռ ան պիտի երկնայ գառիվար անկողնի մը վրայ: Մի ամչնար, ով կին, քակելու մագերդ, թեսագիական «պաքանթ»ի մը պէս և թող տալէ վարստղորներդ վզիդ շուրջ: Գուն ալ, որուն պորտը ծնունդներու աստուածոյ կողմէն խորշումներով դրոշմուած է, թեթեւաշարժ Պարթեւին պէս ընկերակելով ընկրկելով կուռէ: Աստղիկը հազար դիրքեր կ'առնէ. էն պարզը և էն քիչ յոգնեցուցիչը կը կայանայ կիսովին աջ կողին վրայ շրջելուն մէջ:

Թող կինը ճաշակէ հեշտանքը մինչեւ իր էն խորունկ ծուծը և թող իր հաճոյքը իր սիրահարէն զգացուի նոյն կէտին վրայ: Թող վերջ չտրուի ոչ գողտր բառերուն ոչ

քաղցր մրմունջներուն. թող հեշտաբերին խօսքերը ընդ-
միջեն անոնց խաղերը:

Եւ դուն ալ որուն բնութիւնը զլացած է հեշտանքի
զգացումը՝ կեզծէ հաճոյքը սդայօդ խոստովանութիւն-
ներով: Գժբախտ է այն ազգիկը, որուն գործարանը՝ որմէ
մարդն ու կինն պէտք են վայելեն նոյն չափով՝ անզգամ
է ու թմրած: Գոնէ, երբ կը կեղծես, զգուշացիր ինք-
զինքդ մատնելէ. ջանա այնպէս ընել որ խաբես շան-
ժուճներովդ և աչքերովդ: Թող քու ձայնդ և հառաչ-
ներդ հաճոյքիդ մասին վկայեն. Ո՛վ ամօթ! հեշտանքն
ալ ուրեմն իր գաղտնիքներն ունի!:

ՎԵՐՁ.



ՃԱՇԱՐԱՆ «ՌԷՓԻՆԱ»

Տնօրէն՝ ՍԵՂԻՐԱՔ ՊՈՒԳՏԱՃԵԱՆ

3, Rue de l'Ecole de Médecine — Paris (6°)

Métro : Odéon et St-Michel

Ֆրանսական և արեւելեան խոհանոց

Մաքուր և անթերի սպասարկութիւն

Խնամով սպասարարուած ճաշեր շատ գիւրամատ-
չելի գիներով. մէկ անգամեւն այցելութիւնը
բաւ է մշտական յաճախորդ գտնելու համար:

ՄԻՇՏ ՄԵԶԻ!

ԱԴԱՄ ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԴԵՐՉԱԿԱՏՈՒՆ

սիւ Պէռժէս թիւ 79, Փալիզ

Ռուի Ֆրանսական և Անգլիական ընտիր կերպաներ

ճաշի եւ խնամեալ աշխատութիւն

ԴԻՄԵՑԻՔ ՄԻՇՏ ՄԵԶԻ!

ՄԱՍԼՈՅ ՏԱԿ Է

ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ

0025899

ՀՀ Ազգային գրադարան



NL0025899

